

Հարգելի ուսանողներ,

Եկամտային հարկի վերադարձի նպատակով վճարված ուսման վարձի համար հաշիվ (ինվոյս) ստանալու համար պետք է առաջնորդվել հետևյալ կարգով.

1. Մուտք գործել AUA-ի պաշտոնական կայք՝ <https://aua.am/>, այնուհետև անցնել <https://finaid.aua.am/> բաժին:
2. Բացել **Forms** բաժինը և ընտրել համապատասխան դիմումի ձևը:
3. Լրացնել բոլոր պահանջվող դաշտերը:
4. Դիմումի վերջում կցել վճարման անդորրագրերը, որոնցում պարտադիր պետք է նշված լինեն՝
 - վճարողի անունը և ազգանունը,
 - վճարման գումարը,
 - «Նպատակ» դաշտում՝ ուսանողի անունը և ազգանունը:

Այն դեպքերում, երբ վճարումը կատարվել է SONIS կայքի միջոցով, անհրաժեշտ է ներկայացնել տվյալ գործարքի բանկային փաթեթով կատարված վճարման անդորրագրեր (Payment receipts):

Եկամուտների տարեկան հայտարարագիր կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության այն ռեզիդենտ ֆազիլացիները, որոնք հանդիսանում են եկամտային հարկ վճարողներ:

Տեղեկացնում ենք, որ 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հայտարարատուն կարող է ներկայացնել սոցիալական ծախսի փոխհատուցման հայտարարագիր և կատարված սոցիալական ծախսը ենթակա է փոխհատուցման եթե վճարումը կատարվել է ծնողների կամ ամուսինների կողմից: Նշված ժամանակահատվածից հետո սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունքը հայտարարատուի մոտ ծագում է միայն այն դեպքում, երբ վճարումը կատարվել է անմիջականորեն հայտարարատու ֆիզիկական անձի կողմից, որը հաստատվում է իր կողմից ներկայացված վճարման անդորրագրով:

ՀԱՀ հաշվապահության կողմից վճարված ուսման վարձի հաշիվ դուրս գրելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտարարատուի կողմից տվյալ տարվա համար կատարված անկանխիկ վճարումների անդորրագրերը:

Ներկայացվող անդորրագրերի գումարը պետք է լինի հավասար կամ մեծ 100,000 (մեկ հարյուր հազար) դրամից: Եթե վճարումները կատարվել են 100,000 դրամից պակաս գումարներով, ապա անհրաժեշտ է կցել բոլոր անդորրագրերը, որոնց ընդհանուր գումարը կլինի հավասար կամ ավելի 100,000 դրամից: Եթե հայտարարատուն կատարել է 100000 դրամից պակաս միայն մեկ վճարում, ապա ներկայացվում է միայն այդ մեկ անդորրագիրը:

Սոցիալական ծախսերի փոխհատուցման նպատակով ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները և գավակները (այդ թվում՝ որդեգրողներն ու որդեգրվածները):

Խնդրում ենք նկատի ունենալ, որ հաշվապահության կողմից Ձեզ լրացված հաշիվ չի ուղարկվելու: Հաշվապահության կողմից ձևակերպված հաշիվը ավտոմատ կերպով արտացոլվելու է Հայտարարատուի կողմից լրացվող հայտարարագրի 4-րդ բաժնում:

Եկամուտների տարեկան հայտարարագիրը լրացնելուց և ստորագրելուց հետո անհրաժեշտ է նույն հարթակում՝ <https://self-portal.taxservice.am/sign-in/>, ներկայացնել նաև համապատասխան դիմում՝

Վոխհատուցման գումարը միասնական հաշվից ստանալու նպատակով՝ նշելով Ձեր բանկային հաշվեհամարը և կատարելով էլեկտրոնային ստորագրում:

Գործընթացը իրականացվում է ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման համաձայն:

Հայտարարագիրը լրացնելու համար տեսանյութի ուղեցույց՝
<https://www.youtube.com/watch?v=Hj8q9ZAS-II>